«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2013 թվականի

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ քննությունների արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները»** հարցը (զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան: 2012-2013 ուսումնական տարում համալսարանն ունեցել է առկա ուսուցման բակալավրիատի 1268 (նախորդ տարվա 1238-ի փոխարեն), հեռակա ուսուցման բակալավրիատի 339 (նախորդ տարվա 251-ի փոխարեն) և առկա ուսուցման մագիստրատուրայի 579 (նախորդ տարվա 444-ի փոխարեն) շրջանավարտներ, որոնց համար կազմակերպվել են ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանություն և ամփոփիչ ատեստավորման քննություններ: Ռեկտորատը, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպական բաժինները, դեկանատները և ամբիոնները բավական աշխատանք են կատարել ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպումը պատշաճ մակարդակով իրականացնելու և նախորդ տարիներին նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Առկա ուսուցման բակալավրիատում (առանց նախորդ տարիների շրջանավարտների) ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրված 1268 ուսանողից դրական գնահատական են ստացել 1196-ը (առաջադիմությունը կազմել է 94,3%՝ նախորդ տարվա 94,7%-ի դիմաց). 365-ը կամ 28,8%-ը (2012 թ.՝ 26,9%) արժանացել են «գերազանց», 271-ը կամ 21,4%-ը (2012 թ.՝ 22,1%)՝ «գերազանց» և «լավ» գնահատականների, բուհը չի ավարտել 72 ուսանող (2012 թ.՝ 66 ուսանող):

Առկա ուսուցման բակալավրիատում դրական գնահատականով պաշտպանվել է 678 ավարտական աշխատանք, որից 441-ը (65,1%) արժանացել են «գերազանց», 162-ը (23,9%)՝ «լավ» գնահատականների, իսկ 6-ը չեն ներկայացրել աշխատանքները կամ ստացել են «անբավարար» գնահատական: Նախորդ տարիների շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել է 69 ուսանող, որից 60-ը (87,0%) գրանցել են դրական արդյունք (նախորդ տարվա 108/100-ի (92,6%) դիմաց): 182 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (նախորդ տարվա 183-ի դիմաց):

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը գերազանցապես կազմակերպվել է ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ:

Ամփոփիչ ատեստավորման քննություններից և ավարտական աշխատանքների պաշտպանությունից 100% արդյունք արձանագրվել է 6 մասնագիտություններում

(նախորդ տարվա 13-ի փոխարեն)՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Տնտեսագիտության տեսություն», «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում», «Պետական և մունցիպալ կառավարում» և «Զբոսաշրջության կառավարում», իսկ ամենացածր առաջադիմությունը (86,1%) ցուցաբերել են «Հողագույքային հարաբերություններ» մասնագիտության շրջանավարտները:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրված 339 ուսանողից 267-ը (78,8%) ստացել են դրական, 58-ը՝ «անբավարար» գնահատականներ, իսկ 14-ը չեն ներկայացել քննություններին: Ավարտական աշխատանք է հանձնարարվել 56 ուսանողի, որից 19-ը ստացել են «գերազանց», 31-ը՝ «լավ», 1-ը՝ «անբավարար» գնահատականներ: 4 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ:

Առկա ուսուցման մագիստրատուրայում պաշտպանության է ներկայացվել 579 թեզ, որից 320-ը (55,3%) արժանացել են «գերազանց», 144-ը (24,9%)՝ «լավ», 104-ը (18,0%)՝ «բավարար» գնահատականների: Նախորդ տարիների շրջանավարտներից մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել է 16 ուսանող, որից 15-ը ստացել են դրական գնահատական: 135 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ:

Խորհուրդը միաժամանակ նշում է, որ ինչպես ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության, այնպես էլ ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման աշխատանքներում դեռևս կան շտկման ենթակա թերություններ և լուծում պահանջող խնդիրներ:

Առանձնացնենք ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում տեղ գտած ուշադրության արժանի թերությունները և բացթողումները:

1) Բազմաթիվ աշխատանքներում օգտագործված գրականության ցանկերում միայն մի քանի աղբյուր է նշված: Որոշ աշխատանքներում հանդիպում են համացանցից կամ պետական մարմինների պաշտոնական կայքում տեղակայված փաստաթղթերից նույն ոճով արտատպված նյութեր՝ առանց հղումների. առաջարկությունները չունեն բավարար հիմնավորվածություն:
2) Ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաներն արդիականացված են: Չնայած դրան, ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի թեմաներում դեռևս նկատվում են նախորդ տարիների թեմաների կրկնություններ. որոշ դեպքերում փորձառության վայրերը չեն համապատասխանում թեմաներին:
3) Աշխատանքների մի մասում բացակայում են վերլուծությունները: Սակավ են այնպիսինները, որտեղ դրանք իրականացվել են մաթեմատիկական ու վիճակագրական մեթոդների օգնությամբ և համակարգիչների կիրառմամբ:
4) Կան դեպքեր, երբ մագիստրոսական թեզերն իրենց գիտական խորությամբ և ծավալով չեն տարբերվում ավարտական աշխատանքներից:
5) Նկատվում են բազմաթիվ կարծիքներ և գրախոսություններ, որոնք չունեն համապատասխան ձև, բովանդակություն, չեն պարունակում հիմնավորված եզրահանգումներ: Որոշ կարծիքներ և գրախոսություններ չեն գերազանցում մեկ էջը:
6) Առկա են ավարտական աշխատանքներ ու մագիստրոսական թեզեր, որոնք ներկայացված են բազմաթիվ տեխնիկական սխալներով և առանց խմբագրման:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման գործընթացում ևս կան խնդիրներ:

1) Ակնարկային դասախոսությունները դեռևս չեն կազմակերպվում պատշաճորեն:

2) Թերություններ կան քննատոմսերի կազմման գործընթացում: Որոշ դեպքերում հարցերի ձևակերպումները հստակ չեն, կան կրկնություններ:
3) Ելնելով արդյունքների վերլուծությունից՝ կարելի է նկատել, որ գնահատման գործընթացում առկա են որոշ սուբյեկտիվ դրսևորումներ:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպումը համապատասխան մակարդակի հասցնելու նպատակով վերը հիշատակված հիմնախնդիրները շուտափույթ լուծում են պահանջում:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին և դեկաններին՝**

   1) ավարտական աշխատանքների համար մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ը, իսկ մագիստրոսական թեզերի համար մինչև 2014 թվականի փետրվարի 8-ը ամբիոններում քննարկել, ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատել և ուսումնամեթոդական բաժին ներկայացնել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի արդիականացված թեմաների, կատարող ուսանողների և ղեկավարների ցանկը,
   2) վերանայել ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների հիման վրա մշակված առարկայական արդիականացված ծրագրերին,
   3) ամփոփիչ ատեստավորման քննությունների քննատոմսերում բացառել հարցերի կրկնությունները,
   4) ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատվելուց հետո բացառել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխությունը,
   5) խիստ կարևորել փորձառության վայրի համապատասխանությունը ավարտական աշխատանքի թեմային, հնարավորինս ապահովել փորձառության արդյունքների արտացոլումը ավարտական աշխատանքներում, իսկ ղեկավարներ նշանակելիս՝ նրա մասնագիտացման ոլորտը,
   6) խիստ կարևորել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և անդամների ընտրության գործընթացը. հանձնաժողովներում ընդգրկել բացառապես հեղինակավոր մասնագետների և առաջատար դասախոսների:

2. **Սույն որոշումը քննարկել բոլոր թողարկող ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում:**

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին և Մ.Ն.Հարությունյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
11.11.2013 թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2013 թվականի

2013-2014 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2013-2014 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է ՀՀ ԿԳՆ-ի հաստատած կանոնակարգի պահանջներին համաձայն: Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 86 դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 951 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 23 դիմորդ, նախապատրաստականից ընդունվել է 1 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով՝ 33 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 1037 դիմորդ:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 624 դիմորդ, որից 175-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 449-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Գործատուների հետ համատեղ իրականացվող 8 մասնագիտացումներով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը կազմակերպվել է համալսարանին հատկացված տեղերի հաշվին:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 417 դիմորդ. մրցույթով ընդունվել են 361-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 518 դիմորդ. մրցույթով ընդունվել են 387-ը՝ 8 մասնագիտությամբ և 16 մասնագիտացմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2013-2014 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ֆակուլտետների խորհուրդներին՝ վերլուծել 2013 թվականի ընդունելության արդյունքները (պատասխանատուներ՝ ֆակուլտետների դեկաններ):
3. Համալսարանի կայքի միջոցով կատարելագործել ապագա դիմորդներին տրամադրվող տեղեկատվական համակարգն ու կառուցակարգերը:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
11.11.2013 թ.

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013 թվականի նոյեմբերի 11-ի N 1 նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հաշվապահական հաշվառում»** մասնագիտության և **«Աուդիտ»** մասնագիտացման առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2013-2014 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը հաստատելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Դոցենտներ Ա.Հ.Սարգսյանը, Լ.Հ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել **«Հաշվապահական հաշվառում»** մասնագիտության և **«Աուդիտ»** մասնագիտացման առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի 2013-2014 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը՝ համաձայն աղյուսակի.

Մասնագիտություն, մասնագիտացում	Ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական ցանկը	
	Պարտադիր	Ավարտական աշխատանք չգրող ուսանողների համար
Հաշվապահական հաշվառում	**Ֆինանսական հաշվառում**	**Հարկային հաշվառում**
Աուդիտ	**Աուդիտ**	**Տնտեսական գործունեության վերլուծություն**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

11.11.2013 թ.